

Ազգային ուսումնական պլան

Ներածություն

«Ուսուցման մեջ կարևոր նշանակություն ունի ոչ թե այն հումքը, որը տրվում է կոնկրետ հմտության կամ կոնկրետ բովանդակություն ունեցող գիտելիքի տեսքով, այլ կարևորը ըստ սահմանված ուղղության աշակերտի ուժերի զարգացումն է»:


Դիմիտրի Ուզնաձե

Ազգային ուսումնական պլանը հիմնվում է ընդհանուր կրթության համակարգի համար հիմնարար նշանակություն ունեցող փաստաթղթի՝ «Ընդհանուր կրթության ազգային նպատակների» վրա, որը սահմանում է, թե ինչպիսի սերունդների դաստիարակությանը պետք է նպաստի Վրաստանի ընդհանուր կրթության համակարգը: Ազգային ուսումնական պլանի գլխավոր խնդիրն է ստեղծել ազգային նպատակներին հասնելու համար նպաստավոր կրթական մթնոլորտ ու միջոցներ: Այդ նպատակներից ելնելով, այն ընտրում է անձի զարգացմանը կողմնորոշված կրթական հայեցակարգ: Ժամանակակից կրթական ոլորտում այդ հայեցակարգի վերելքին նպաստեցին 70-ական թվականներից տարբեր գիտական մասնաճյուղերում (հոգեբանություն, նեյրոգիտություններ, կրթական գիտություններ, հոգեբանական լեզվաբանություն, լեզուների դիդակտիկա և այլն) ընթացող լարված հետազոտությունները, որոնք գիտականորեն փաստարկեցին նրա առավելությունը հաստատուն, դինամիկ և գործառնության գիտելիքների ստեղծման, համապատասխանաբար, այնպիսի քաղաքացու դաստիարակման համար, որը կպատասխանի ժամանակակից աշխարհի մարտահրավերներին ու պահանջներին:

Անհատին կողմնորոշված կրթական գործընթացի կենտրոնում կանգնած է աշակերտը, նրա զարգացման գործընթացը և նրա ձեռքբերած արդյունքը: Արդյունքին կողմնորոշվելը նկատի ունի ոչ միայն աշակերտին հաղորդած տեղեկության մտապահում, այլև այդ տեղեկության վերածում հաստատուն, դինամիկ և գործառնության գիտելիքի:

Հենց այդ պատճառով Ազգային ուսումնական պլանի հիմնարար սկզբունքը արդյունքին կողմնորոշվելն է, որը ենթադրում է աշակերտների զինում գործունակ գիտելիքներով: Այս էական պահանջը արտացոլվում է առարկայական ծրագրերի կառուցվածքում, որը բաղկացած է երեք մասից:

Առարկայական ծրագրերի կառուցվածքը



Առարկայական ծրագրերի ընդհանուր մասը սահմանում է առարկայի դասավանդման խնդիրներն ու այն հիմնական կողմնորոշիչները, որոնք բխում են ընդհանուր կրթության ազգային նպատակներից:

Առարկայական չափորոշիչը սահմանում է կոնկրետ առարկայական իրազեկությունները, որոնց պետք է տիրապետեն աշակերտները նախանշված նպատակներին հասնելու համար: Առարկայական չափորոշում նկարագրված իրազեկություններն ընդգրկում են երեք կարգի գիտելիքներ. ա) Դեկլարատիվ, այսինքն՝ ստատիկ բնույթի գիտելիք, որը չի ապահովում գիտելիքի ընթացակարգային կիրառում: Աշակերտի գիտելիքը դեկլարատիվ է, եթե նա գիտի կոնկրետ մաթեմատիկական գործողության կատարման կանոնը, թեև չի կիրառում այն: բ) Ընթացակարգային կամ շարժունակ գիտելիք, որը գիտելիքն օգտագործելու, իրացնելու հնարավորություն է տալիս: Աշակերտի գիտելիքը ընթացակարգային է, եթե նա կատարում է մաթեմատիկական գործողությունը: Ընթացակարգային գիտելիքները յուրացվում են բազմաթիվ վարժությունների միջոցով: գ) Պայմանական կամ գործառական գիտելիք, որն ապահովում է գիտելիքի համապատասխան կիրառում: Աշակերտի գիտելիքը պայմանական է, եթե նա կարողանում է տրված խնդիրը լուծելու համար ընտրել համապատասխան մաթեմատիկական գործողություն:

Գիտելիքի երեք կարգ

Դեկլարատիվ	Ընթացակարգային	Պայմանական
գիտեմ	կարող եմ	օգտագործում եմ համապատասխանաբար
ստատիկ	դինամիկ	շարժունակ, գործառութային

Առարկայական ծրագրերի հիմնական մասի՝ չափորոշի, հիմնարար սկզբունքը արդյունքին կողմնորոշվելն է: Նրանում ուսուցման նպատակները ձևավորված են կոնկրետ արդյունքների տեսքով, այսինքն՝ այն գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տեսքով, որոնք աշակերտը պետք է ցուցաբերի ուսումնական գործընթացն ավարտելուց հետո: Չափորոշչով սահմանված արդյունքների ու ստուգիչների տեսքով ուսուցչին տրվում է կոնկրետ ցուցում այն մասին, թե ինչպես և ինչ տեսանկյունից պետք է աշակերտներին մշակել տա թվարկման մեջ տրված իմաստային հարցերը: Այն մի ուղեցույց է, որը մատնանշում է, թե ինչպես պետք է ընթանա ուսումնական գործընթացը, որպեսզի աշակերտները գիտակցված և հանգամանորեն ձեռք բերեն գիտելիքը:

Ծրագրի բովանդակությունը իրենից ներկայացնում է պարտադիր ու հանձնարարական ուսումնական հարցերի թվարկում:

Ազգային ուսումնական պլանը, որը մշակում է հանրային իրավունքի իրավական դեմք Ազգային ուսումնական պլանների ու գնահատման կենտրոնը, նախատեսված է թե՛ ընդհանուր կրթության ոլորտում գործող, և թե՛ մասնակից բոլոր սուբյեկտների համար:

Գլուխ I.

Ուսանում-ուսուցման հիմնական սկզբունքները

Գլուխ I. Կրթական գործընթացի կազմակերպումը

Հոդված 1. Ընդհանուր կրթության աստիճանները

1. Լրիվ ընդհանուր կրթությունն ընդգրկում է երեք աստիճան՝

ա) Տարրական - I-VI դասարաններ

բ) Բազային - VII-IX դասարաններ

գ) Միջնակարգ - X-XII դասարաններ

2. Տարրական և բազային կրթությունը պարտադիր է:

3. Լրիվ ընդհանուր կրթություն հնարավոր է ստանալ ընդհանուր կրթության երեք աստիճաններում Ազգային ուսումնական ծրագրով սահմանված նվաճումների մակարդակը հաղթահարելու դեպքում:

Հոդված 2. Ընդհանուր կրթության աստիճանների խնդիրները

1. Տարրական աստիճանի հիմնական խնդիրներն են.

ա) Աշակերտի համար պայմաններ ստեղծել՝ սեփական հնարավորությունները դրսևորելու և ուսման համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ մշակելու նպատակով:

բ) Աշակերտի մեջ ձևավորել դրական վերաբերմունք ուսման նկատմամբ և աշխարհը ճանաչելու հետաքրքրություն:

գ) Աշակերտի համար ստեղծել պայմաններ և հիմքեր հաջորդ՝ բազային աստիճանում, ուսումը հաջողությամբ շարունակելու և այն գիտելիքին տիրապետելու, այն կարողություններն ու հմտությունները զարգացնելու և այն վերաբերմունքը ձևավորելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն ապագայում:

2. Ուսումը հինգ տարեկանից սկսելու դեպքում, առաջին դասարանում.

ա) Դասի գործընթացում պետք է կիրառվեն զարգացնող, դիդակտիկ խաղեր:

բ) Դասը սկսելուց 15 րոպե հետո, ժամանակը պետք է տրամադրել ֆիզիկական ակտիվություններին (3-5 րոպե):

գ) Երաշխավորվում է, որ դասի ընթացքում ակտիվ և պասսիվ գործողությունները հաջորդեն իրար (օր.՝ կարդալուն հետևի նկարչությունը կամ դերերով խաղը):

դ) Հնարավորության սահմաններում, երաշխավորվում է ուսումնական միջավայրը բաժանել մի քանի մասերի, որոնցից առնվազն մեկը կտրամադրվի հանգստին և ազատ ակտիվությանը:

3. Բազային աստիճանի հիմնական խնդիրներն են.

ա) Օգնել աշակերտին հասնել ընդհանուր կրթության ազգային նպատակներին:

բ) Աշակերտի համար պայմաններ ստեղծել այն կարողությունների ու հմտությունների զարգացման համար, որոնք հատկապես կարևոր են ողջ կյանքի ընթացքում:

գ) Աշակերտի համար նախապայմաններ ստեղծել ուսումը շարունակելու կամ աշխատանքային շուկայում ճիշտ ընտրություն կատարելու համար:

ա) Աշակերտի համար ստեղծել պայմաններ՝ ժամանակակից պահանջներին

համապատասխան կրթություն ստանալու համար:

բ) Օգնել աշակերտին անել ապագա ընտրություն (ուսումը շարունակելու և/կամ աշխատանքում ներգրավվելու համար):

գ) Աշակերտին տալ որակյալ լրիվ ընդհանուր կրթություն:

Հոդված 3. Ուսումնական տարվա օրացույցը հանրային դպրոցում

1. Ուսումնական տարին բաժանվում է երկու կիսամյակի: Այն կիսամյակների են բաժանում ձմեռային արձակուրդները:

2. Ուսումնական տարին սկսվելու ու ավարտվելու ժամանակը և արձակուրդների ժամանակն ու տևողությունը նախապես որոշվում է Օրենսդրությամբ:

3. Ուսումնական շաբաթը բաղկացած է հինգ օրից: Անհրաժեշտության դեպքում, թույլատրվում է ուսուցանել շաբաթը վեց օր: Մասնավորապես, վեցօրյա ուսուցանումը թույլատրելի է, եթե.

ա) Դպրոցը որոշի բեռնաթափել ամենօրյա ժամային ցանցը:

բ) Չնախատեսված պատճառներով դպրոցում բաց են թողնվել ուսումնական օրը/օրերը:

4. Դասի տևողությունը սահմանված է 45 րոպե: Բացառություն է կազմում առաջին դասարանը, որտեղ դասի տևողությունը 35 րոպե է: Դասի տևողության հետ կապված բացառություններ կարելի է թույլ տալ ծայրահեղ պայմաններում (սառնամանիք, սաստիկ շոգ և այլն), երբ դպրոցը, ուսումնական գործընթացի ժամանակը կրճատելու նպատակով, հնարավոր է, կարճատև ժամկետով փոխի դասերի տևողությունը:

5. Դասերի միջև առնվազն մեկ դասամիջոցի տևողությունը պետք է սահմանվի առնվազն 15 րոպե: Մնացած դասամիջոցների տևողությունը սահմանվում է դպրոցական ուսումնական պլանով:

Հոդված 4. Աշակերտների քանակը հանրային դպրոցում

1. Դասարանում աշակերտների առավելագույն քանակը սահմանված է 30 աշակերտ:

2. Մույն հոդվածի առաջին կետով սահմանված աշակերտների առավելագույն քանակի հետ կապված բացառությունը թույլատրվում է Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ գրավոր համաձայնությամբ: Այսպիսի դեպքում աշակերտների առավելագույն քանակը չպետք է գերազանցի 35-ը:

3. Զուգահեռ դասարանների գոյությունը թույլատրելի է այն դեպքում, եթե յուրաքանչյուր զուգահեռ դասարանում աշակերտների նվազագույն քանակը 18 է: Աշակերտների քանակի հետ կապված բացառություն հնարավոր է թույլ տալ Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ գրավոր համաձայնությամբ:

4. Եթե ուսումնական տարվա ընթացքում աշակերտների հոսքի պատճառով դասարանում աշակերտների քանակը չհամապատասխանի սահմանված նորմին, դպրոցը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը, որը իրավասու է ընդունել որոշում դասարանի բաժանման/միացման/գոյություն ունեցող փաստական դրությամբ թողնելու վերաբերյալ:

5. Աշակերտների առավելագույն քանակը սահմանող օրենքը վերաբերում է 2005–2006 ուսումնական տարում դպրոց՝ առաջին դասարան, գնացած աշակերտներին և

յուրաքանչյուր հաջորդ սերնդին: Ավելի բարձր դասարաններում դպրոցներն այդ օրենքը կարող են ընդունել միայն այն դեպքում, եթե աշակերտներն այդ գործողության արդյունքում չեն հեռացվի դպրոցից:

6. Դասարանը բաժանելը թույլատրվում է վրաց լեզվի ու գրականության և օտար լեզուների դասերին, բայց միայն այն դեպքում, եթե դասարանում աշակերտների քանակը գերազանցում է 25-ը, և դպրոցն ունի համապատասխան ֆինանսական հնարավորություն: Օտար լեզվի ժամերին թույլ է տրվում բաժանումը կատարել՝ նկատի առնելով աշակերտների լեզվի տիրապետման մակարդակը:

7. Փոքր քանակակազմով դպրոցներում թույլ է տրվում կազմել միացյալ դասարաններ: Միացյալ դասարաններում աշակերտների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 15-ը:

8. Երաշխավորվում է միացյալ դասարանները կազմել աստիճանի սահմաններում և մեկ միացյալ դասարանում չմիավորել երկու դասարանից ավելի:

9. Միացյալ դասարաններ կազմելու դեպքում յուրաքանչյուր դասարանի աշակերտ պետք է անցնի համապատասխան դասարանի/առարկայի համար Ազգային ուսումնական պլանով սահմանված անհրաժեշտ ժամերի քանակը:

10. Միացյալ դասարաններում ուսանում-ուսուցման գործընթացն ամբողջովին պետք է հիմնվի տարբերակված (դիֆերենցիալ) ուսուցման սկզբունքների վրա:

Հոդված 5. Դպրոցի ընդհանուր կուլտուրան

1. Դպրոցը պետք է նպաստի փոխադարձ հարգանքի ու հավասարության սկզբունքների պահպանմանը:

2. Դպրոցը պետք է նպաստի դպրոցական հասարակության անդամների համար ստեղծագործական և համագործակցային միջավայրի ստեղծմանը:

3. Դպրոցը պետք է նպաստի և կազմակերպի մարզական, գեղարվեստական, ակումբային ակտիվություններ և դպրոցական նախագծեր, որոնց մեջ ներգրավված կլինեն տարբեր դասարանի աշակերտներ, ուսուցիչներ ու ծնողներ:

Հոդված 6. Դասղեկ

1. Հանրային դպրոցում յուրաքանչյուր դասարան պետք է ունենա դասղեկ: Դասղեկը պետք է դասավանդի իր դասղեկական դասարանին:

2. Դասղեկի աշխատանքի նպատակն է օգնել աշակերտներին հասնել ընդհանուր կրթության ազգային նպատակներին, զարգացնել նրանց անհատական, բարոյական, մտավոր ու ֆիզիկական հնարավորությունները: Դասղեկը պետք է նպաստի աշակերտների առողջ ապրելակերպի հաստատմանը, պետք է զարգացնի նրանց՝ ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական գիտակցությունը և օգնի գիտակցել ընտանիքի, հասարակության և պետության հանդեպ սեփական իրավունքներն ու պարտականությունները:

3. Դասղեկի պարտականություններն են.

ա) Ծանոթացնել աշակերտին և նրա ծնողին/օրինական ներկայացուցչին (այսուհետ՝ ծնող) իրենց իրավունքներն ու պարտականությունները (Դպրոցի ներքին

կարգապահական կանոններ, Աշակերտի էթիկայի օրենսգիրք, դպրոցական ուսումնական պլանի համապատասխան հարցեր և այլն):

բ) Պարբերաբար անցկացնել դասղեկական ժամ (տարրական ու բազային աստիճանում):

գ) Օգնել աշակերտին լուծել թե՛ ակադեմիական, թե՛ դպրոցական միջավայրում ծագած տարբեր հիմնախնդիրները:

դ) Միջնորդ հանդիսանալ՝ աշակերտի, ծնողի և ուսուցչի միջև ծագած խնդիրները լուծելիս:

ե) Ծնողին պարբերաբար տեղեկացնել աշակերտի ակադեմիական առաջադիմության, կարգապահության, անձնական խնդիրների և հաջողությունների մասին: Անթույլատրելի է ուրիշի ներկայությամբ խոսել մի աշակերտի կարգապահության և ակադեմիական առաջադիմության մասին:

զ) Անհրաժեշտության դեպքում, հանդիպել հետաքրքրված ծնողին և տեղեկացնել աշակերտի ու դպրոցում ընթացող գործընթացների մասին:

է) Իմանալ դպրոցից աշակերտի բացակայության պատճառը:

ը) Ուսուցիչներից ստացած տեղեկության հիման վրա, կատարել իր դասղեկական դասարանի յուրաքանչյուր աշակերտի ակադեմիական առաջադիմության, դասերին ներկա գտնվելու ու վարքագծի վերլուծություն և գրել յուրաքանչյուր աշակերտի համառոտ բնութագիրը: Բնութագրում պետք է արտահայտվեն աշակերտի ուժեղ կողմերը, նրա հաջողությունները՝ ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական հարաբերությունների տեսակետից, նրա մասնակցությունը խմբակների աշխատանքներին, սպորտային մրցումներին և այլ տեսակի միջոցառումներին, աշակերտի ակադեմիական, ֆիզիկական, հուզական ու սոցիալական զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը, որոնց հաշվի առնելն օգտավետ կլինի աշակերտի համար:

թ) Աշակերտի՝ այլ դպրոց տեղափոխվելու դեպքում, դասղեկը պետք է պատրաստի տեղեկություններ ինչպես նրա ակադեմիական առաջադիմության, այնպես էլ հաճախման մասին:

4. Դասղեկի աշխատանքը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքներին.

ա) Լիարժեք դաստիարակություն՝ դաստիարակչական աշխատանքը պետք է ուղղված լինի անհատի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական ու հոգևոր զարգացմանը:

բ) Աշակերտի հնարավորությունների բացահայտում՝ դասղեկի գործառույթը աշակերտի ներքին ուժերի գործարկումն ու նրա տաղանդի և հնարավորությունների բացահայտման համար համապատասխան պայմանների ստեղծումն է:

գ) Աշակերտների մեջ զարգացնել պատասխանատվության ու պարտականության զգացում՝ աշակերտների ընդգրկվածությանը նպաստելու համար, դասղեկը պետք է նրանց հնարավորություն տա մասնակցել ակտիվությունների (տոնահանդեսներ, արշավներ, էքսկուրսիաներ և այլն) պլանավորմանը և լուծել այդ ընթացքում ծագած հիմնախնդիրները: Դասղեկը առավելագույնս պետք է հաշվի առնի աշակերտների հետաքրքրությունները:

դ) Համագործակցության սկզբունք՝ դասղեկի հարաբերությունը աշակերտների հետ պետք է հիմնվի համագործակցության, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա:

Հանրային դպրոցի դասղեկն իր աշխատանքային գործունեության ընթացքում պետք է օգտագործի Վրաստանի կրթության ու գիտության նախարարության (այսուհետև՝ Նախարարություն), հանրային իրավունքի իրավական դեմքի՝ Ազգային ուսումնական պլանների ու գնահատման կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն), և հանրային իրավունքի իրավական դեմքի՝ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի, կողմից մշակված և/կամ երաշխավորված մեթոդական դասագրքերը և ուղեցույցները:

Հոդված 7. Առարկայական ամբիոնները հանրային դպրոցում

1. Հանրային դպրոցն իրավագոր է, ըստ առարկայական խմբերի, ստեղծել ամբիոններ, որոնցում կմիավորվեն առարկայական խմբի բոլոր ուսուցիչները: Այն դեպքում, եթե դպրոցի առարկայական խմբերում մեկական ուսուցիչ կա, հնարավոր է, որ տարբեր առարկայական խմբերի մանկավարժները միավորվեն մեկ ամբիոնում (օրինակ, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների): Դպրոցը կարող է ստեղծել նաև տարրական աստիճանի ամբիոն:

2. Ամբիոնների գործառույթները.

ա) Առարկայական խմբի առարկայի/առարկաների դասավանդման համակարգում:

բ) Փորձի փոխանակում ամբիոնի անդամների միջև, հաջողությունների նախապայմանների սահմանում և հիմնախնդիրների լուծման ուղիների որոնում:

գ) Դասի գործընթացի, ուսուցիչների մասնագիտական զարգացման ու դպրոցական գրադարանի համար ընտրել կրթական ռեսուրսներ և ներկայացնել մանկխորհրդին:

դ) Համակարգված աշխատել մյուս ամբիոնների հետ (օրինակ, համաձայնեցնել պատմության և վրաց լեզվի ու գրականության ընդհանուր թեմատիկան, էքսկուրսիաների ժամանակ ընդհանուր հանձնարարություններ մտածել և այլն):

ե) Հոգալ ուսուցչի մասնագիտական զարգացման մասին:

զ) Հանձնարարականների մշակել՝ կապված ուսանման և ուսուցման ժամանակակից մեթոդաբանության և մոտեցումների արմատավորման հետ:

3. Ամբիոնների կազմակերպումը.

ա) Ամբիոնի նախագահին ամբիոնն ընտրում է մեկ ուսումնական տարվա ժամկետով:

բ) Առարկայական ամբիոնի յուրաքանչյուր անդամ ռոտացիայի (պարբերական կրկնության) սկզբունքով դառնում է ամբիոնի նախագահ: Նույն անձին երկրորդ անգամ կարելի է ընտրել միայն այն դեպքում, եթե առարկայական խմբի յուրաքանչյուր անդամ գոնե մեկ անգամ արդեն եղել է նախագահի պաշտոնում:

4. Ամբիոնի նախագահի գործառույթներն են.

ա) Ամբիոնի հանդիպումների կազմակերպումը (օրակարգի պատրաստում, արձանագրությունների ու մյուս փաստաթղթերի կազմում-պահպանում):

բ) Դպրոցի ղեկավար մարմիններին տեղեկացնել ամբիոնի հանդիպումների արդյունքում կայացրած որոշումների մասին (օրինակ, երաշխավորագիր ատացած (գրիֆ շնորհված) դասագրքեր և այլ ուսումնական նյութեր ընտրելու վերաբերյալ):

գ) Մասնագիտական զարգացման համար օգտակար աշխատանքների (գործընկերների հետ հանդիպումներ, վարժանքներ, գիտաժողովներ և այլն) կազմակերպում:

5. Ամբիոնը հավաքվում է կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ: Մինչև ուսումնական տարին սկսվելը ամբիոնն անպայման պետք է հավաքվի:

Գլուխ II. Կրթական ռեսուրսներ

Հոդված 8. Կրթական ռեսուրսների կառավարումը

1. Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է կիրառել բազմաբնույթ կրթական ռեսուրսներ ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար:
2. Դպրոցը պետք է աշակերտների ու ուսուցիչների համար մատչելի դարձնի կրթական ռեսուրսները (գրադարան, համակարգչային լաբորատորիա և այլն):
3. Դպրոցը պետք է մշակի և աշակերտներին ծանոթացնի դպրոցում գոյություն ունեցող տարբեր կրթական ռեսուրսներից օգտվելու կանոններին:

Հոդված 9. Կրթական ռեսուրսների տեսակները.

- ա) երաշխավորություն ստացած դպրոցական դասագրքեր,
- բ) օժանդակ գրականություն,
- գ) էլեկտրոնային կրթական ռեսուրսներ,
- դ) տարբեր տեսակի դիդակտիկ նյութեր (քարտեզներ, պլակատներ, մոդելներ և այլն),
- ե) գրադարան, թատրոն, թանգարան, պատմական հուշարձաններ, շրջակա միջավայր և այլն:

Հոդված 10. Երաշխավորություն ստացած (գրիֆ շնորհված) դասագրքեր

1. Դպրոցական դասագրքերին գրիֆ շնորհելու գործընթացը ղեկավարում է Կենտրոնը:
2. Դասագրքերն ընտրում են ուսուցիչները/ամբիոնները (ամբիոնների գոյության դեպքում):
3. Մանկխորհուրդը, հոգաբարձուների խորհրդի հետ համաձայնությամբ, դասարաններին/աստիճաններին և առարկաներին համապատասխան, հաստատում է Կենտրոնի կողմից գրիֆ շնորհված դասագրքերից մանկավարժների ընտրած դասագրքերի ցանկը:
4. Ընտրված գրիֆ շնորհված դասագիրքը կոնկրետ դպրոցում գործում է ընտրվելուց հետո առնվազն 6 տարվա ընթացքում:
5. Վեց տարվա ժամկետի տևողության հետ կապված բացառությունը թույլ է տրվում միայն այն դեպքում, եթե.
 - ա) Ազգային ուսումնական պլանում իրականացվում է այնպիսի էական փոփոխություն, որը պահանջում է փոխել դասագրքերը:
 - բ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով դասագիրքը գրկվում է գրիֆից:
6. Մույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում, դպրոցը սահմանված կարգի համաձայն, պարտավոր է նորից ընտրել համապատասխան դասարանի, առարկայի դասագիրքը:
7. Մի դպրոցի սահմաններում՝ յուրաքանչյուր զուգահեռ դասարանում, պետք է դասավանդվի միևնույն դասագրքով:

8. Դասագիրքն ընտրելիս՝ պետք է հաշվի առնվեն դասագրքերին տրված գնահատականները, որոնք դպրոցի համար մատչելի են Կենտրոնի կողմից նախապես պատրաստած «Գրիֆ շնորհված դասագրքերի գրացուցակի» միջոցով: Կենտրոնը «Գրիֆ շնորհված դասագրքերի գրացուցակը» հրատարակում է իր պաշտոնական կայք-էջում:

9. Դասագիրքն ընտրելիս՝ ուսուցիչները ռեսուրս-կենտրոններում կարող են ծանոթանալ դասագրքերի նմուշներին:

10. Մինչև ուսումնական տարին սկսվելը՝ առնվազն մեկ շաբաթ շուտ, ընտրված դասագրքերի ցուցակը դպրոցը պետք է փակցնի աչքի ընկնող տեղում:

11. Ուսուցիչն իրավունք ունի ուսուցանելիս միայն օժանդակ/լրացուցիչ նյութի տեսքով կիրառել ցանկացած ուսումնական նյութ, որն ընտրված ու հաստատված է սահմանված ընթացակարգով: Միաժամանակ, ուսուցչին/դպրոցին արգելվում է աշակերտից պահանջել, որ նա ձեռք բերի գրիֆ չշնորհված դասագրքեր և այլ ուսումնական նյութեր:

Գլուխ III. Դպրոցական ուսումնական պլանը

Հոդված 11. Դպրոցական ուսումնական պլանի նշանակումն ու բաղկացուցիչ մասերը

1. Դպրոցական ուսումնական պլանը պետք է հիմնվի Ազգային ուսումնական պլանի վրա:

2. Հանրակրթական հաստատությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա սկզբի համար պարտավոր է մշակել սեփական դպրոցական ուսումնական պլանը:

3. Հանրային դպրոցում դպրոցական ուսումնական պլանը ուսուցիչների/ամբիոնների (վերջինիս գոյության դեպքում) և տնօրենի մասնակցությամբ մշակում և հոգաբարձուների խորհրդի հետ համաձայնությամբ հաստատում է մանկխորհուրդը:

4. Դպրոցական ուսումնական պլանը պետք է հաստատվի նոր ուսումնական տարին սկսվելուց առնվազն մեկ շաբաթ շուտ:

5. Դպրոցական ուսումնական պլանի նշանակումն է.

ա) Հաշվի առնելով դպրոցի առաջնությունները՝ կոնկրետ հանրակրթական հաստատության համար ճշգրտել Ազգային ուսումնական պլանում տրված ժամային ծանրաբեռնվածությունը:

բ) Սահմանել լրացուցիչ կրթական ու դաստիարակչական ծառայությունը:

գ) Պլանավորել դպրոցական-կրթական միջոցառումներ:

6. Դպրոցական ուսումնական պլանի մասերը.

ա) Դպրոցի առաքելությունը:

բ) Ազգային ուսումնական պլանով նախատեսված լրացուցիչ կրթական ծառայության ցանկն ու նկարագրությունը:

գ) Ազգային ուսումնական պլանով չնախատեսված լրացուցիչ կրթական և դաստիարակչական ծառայության ցանկն ու նկարագրությունը:

դ) Դպրոցի ժամային ցանցը:

ե) Ուսումնական նյութի ցանկը, աստիճաններին ու առարկաներին համապատասխան, այդ թվում գրիֆ շնորհված դպրոցական դասագրքերի ցանկն ըստ դասարանների/մակարդակների և առարկաների:

զ) Ազգային ուսումնական պլանի վրա հիմնված ու մշակված անհատական ուսումնական պլան՝ հատուկ կրթական անհրաժեշտություններով աշակերտների համար (եթե այդպիսի անհրաժեշտություն կա):

է) Աշակերտի ակադեմիական առաջադիմության գնահատման կարգը (որը սահմանում է բաց թողնված ամփոփիչ աշխատանքների վերականգնման, աշնանային քննությունների անցկացման ժամկետներն ու պայմանները և այլն):

ը) Ճշգրտված դասդեկական ծրագիր:

7. Դպրոցի տնօրինությունը պարտավոր է աշակերտներին ու նրանց ծնողներին ծանոթացնել հաստատված դպրոցական ուսումնական պլանի հիմնական հարցերը (հնարավոր է դասարանի դասղեկի միջոցով) ոչ ուշ, քան ուսումնական տարվա սկզբի առաջին շաբաթվա վերջը և ապահովել այդ փաստաթղթի լրիվ տարբերակի հավասարաչափ մատչելիություն բոլոր շահագրգռված կողմերի համար:

8. Դպրոցը ցանկացած նոր աշակերտի ու նոր ծնողի պետք է ծանոթացնի դպրոցական ուսումնական պլանը:

Հոդված 12. Լրացուցիչ կրթական ու դաստիարակչական ծառայություն

1. Դպրոցն իրավունք ունի աշակերտներին առաջարկել Ազգային ուսումնական պլանով նախատեսված լրացուցիչ կրթական և/կամ Ազգային ուսումնական պլանով չնախատեսված կրթական ու դաստիարակչական ծառայություն:

2. Հանրային դպրոցն իրավունք ունի, ծնողների համաձայնությամբ, աշակերտներին առաջարկել ազգային ուսումնական պլանով նախատեսված լրացուցիչ վճարովի կրթական ծառայություն այն դեպքում, եթե.

ա) նշված ծառայությունը չի մատուցվում նույն դպրոցում աշխատող ուսուցչի կողմից,

բ) այդ ծառայությունը դասի բնույթ չի կրում,

գ) նշված ծառայությունը համապատասխան աշակերտին չի մատուցվում դասի ընթացքում:

3. Ազգային ուսումնական պլանով նախատեսված/չնախատեսված լրացուցիչ կրթական ու դաստիարակչական ծառայությունը աշակերտին կարող է առաջարկվել ֆակուլտատիվ կամ պարտադիր առարկայի տեսքով:

ա) Լրացուցիչ պարտադիր առարկայի դասերին պարտավոր են մասնակցել կոնկրետ դպրոցի (դասարանի) բոլոր աշակերտները:

բ) Լրացուցիչ ֆակուլտատիվ առարկան (խմբակը) աշակերտներն ընտրում և նրան հաճախում են ըստ ցանկության:

4. Ազգային ուսումնական պլանով նախատեսված կամ չնախատեսված լրացուցիչ կրթական ու դաստիարակչական ծառայություն առաջարկելու համար՝ դպրոցը պետք է սահմանի.

ա) լրացուցիչ կրթական ու դաստիարակչական ծառայության ցանկը,

բ) լրացուցիչ կրթական ծառայության տեսակը (ֆակուլտատիվ/պարտադիր):

գ) յուրաքանչյուր լրացուցիչ առարկայի համար դպրոցի կողմից մշակված ուսումնական պլան (եթե Ազգային ուսումնական պլանի առարկայական ծրագրերում չկա նման պլան):

դ) դպրոցական ուսումնական պլանով նախատեսված լրացուցիչ պարտադիր առարկայի/առարկաների գնահատման սկզբունքները:

5. Լրացուցիչ պարտադիր առարկայի ուսումնական պլանը պետք է ներառի.

ա) առարկայի դասավանդման նպատակները (որտեղ ձևակերպված կլինի, թե ինչ գիտելիք, կարողություններ ու հմտություններ և վերաբերմունք է նախատեսվում ձեռք բերել այդ գործընթացով):

բ) գնահատման սկզբունքները (միավոր, ստուգարք):

գ) անհրաժեշտ կրթական ռեսուրսների ցանկ:

6. Լրացուցիչ կրթական և դաստիարակչական ծառայության ժամերի կոնկրետ քանակը Ազգային ուսումնական պլանով նախատեսված չէ: Դպրոցն, այս բնույթի ծառայություն առաջարկելիս, ինքը պետք է սահմանի դա: Դպրոցական ուսումնական պլանում լրացուցիչ առարկաներ նախատեսելիս՝ դպրոցը ուշադրություն պետք է դարձնի, որ աշակերտներն ունենան պատշաճ հանգստանալու և սնվելու հնարավորություն:

Հոդված 13. Դպրոցական ժամային ցանցը

1. Դպրոցական ժամային ցանցն ընդգրկում է յուրաքանչյուր դասարանի դասացուցակը, որը ճշտում է, թե շաբաթվա որ օրը, ժամանակի որ հատվածում որ առարկան է դասավանդվում՝ մատնանշելով համապատասխան մանկավարժին:

2. Դպրոցի ժամային ցանցում պետք է նշվեն ինչպես պարտադիր ու կամրնտրական առարկաները, այնպես էլ լրացուցիչ պարտադիր առարկաները (վերջիններիս գոյության դեպքում):

3. Դպրոցն իրավունք ունի Ազգային ուսումնական պլանով մի դասարանի համար սահմանված ժամային ծանրաբեռնվածության 25%-ը վերաբաշխել առարկաների միջև:

4. Դպրոցն իրավունք չունի ժամային ցանցից ընդհանրապես հանել Ազգային ուսումնական պլանով նախատեսված որևէ պարտադիր առարկա:

Հոդված 14. Առարկայի/առարկաների խորացված դասավանդման կարգավիճակ ունեցող հանրային դպրոցներ և մասնավոր դպրոցներ

1. Դպրոցն իրավասու է խորացնել Ազգային ուսումնական պլանով սահմանված առարկայի/առարկաների դասավանդումը:

2. Առարկայի/առարկաների խորացված դասավանդման կարգավիճակ ստանալու համար հանրային դպրոցը Նախարարություն պետք է ներկայացնի.

ա) Դպրոցական ուսումնական պլանը, որտեղ մանրամասնորեն գրված են խորացված դասավանդվող առարկայի/առարկաների ուսումնական ծրագրերը (եթե նման պլան չկա Ազգային ուսումնական պլանի առարկայական ծրագրերում):

բ) Ուսման գործընթացում կիրառվելիք կրթական ռեսուրսների ցանկը:

3. Խորացված ուսուցմամբ առարկաները՝ առարկայի/առարկաների խորացված դասավանդման կարգավիճակ ունեցող հանրային դպրոցում, ինչպես նաև Ազգային ուսումնական պլանով նախատեսված ցանկացած առարկա՝ մասնավոր դպրոցում, հնարավոր է, որ ուսուցանվի Ազգային ուսումնական պլանով սահմանված սխեմայից տարբեր սխեմայով, միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ հանրակրթական հաստատությունը իրավունք չունի աստիճանի սահմաններում ընդհանրապես հանել

Ազգային ուսումնական ծրագրով նախատեսված որևէ պարտադիր առարկա: Մասնավոր դպրոցների համար բացառություն թույլ է տրվում Նախարարության համաձայնությամբ:

4. Մասնավոր դպրոցները և առարկայի/առարկաների խորացված ուսուցման կարգավիճակ ունեցող հանրային դպրոցներն իրավունք ունեն սահմանել դասարանը հաղթահարելու սույն պլանի 21-րդ հոդվածի առաջին կետով սահմանվածից տարբերվող շեմ:

5. Առարկայի/առարկաների խորացված ուսուցման կարգավիճակ ունեցող հանրային դպրոցների ու մասնավոր դպրոցների աշակերտները լրիվ ընդհանուր կրթությունը հաստատող փաստաթուղթը ստանում են սահմանված ընդհանուր կարգով:

Գլուխ IV. Աշակերտի գնահատման համակարգը

Հոդված 15. Աշակերտի գնահատման նպատակը, սկզբունքներն ու մոտեցումները

1. Աշակերտի գնահատման նպատակը ուսանում-ուսուցման որակի կառավարումն է, որը ենթադրում է ուսման որակի բարելավման մասին մտահոգություն ու վերահսկողություն:
2. Աշակերտի ակադեմիական առաջադիմության գնահատումը պետք է լինի հաճախակի ու բազմակողմանի: Այն պետք է նպաստի աշակերտների բազմակողմանի զարգացմանը, նրանց հնարավորությունների բացահայտմանը, տարբեր ներուժով աշակերտների համար համահավասար պայմանների ստեղծմանը:
3. Աշակերտը պետք է տարբեր կերպ գնահատվի (ակնարկ, նախագծի պատրաստում, բանավոր ելույթ, գիտափորձի անցկացում, փորձի կատարում, ներկայացում, գրավոր, գեղանկարչական կամ այլ տիպի աշխատանք, փաստարկված քննարկում և այլն):

Հոդված 16. Որոշող ու զարգացնող գնահատում

1. Դպրոցում կիրառվում է երկու տեսակի գնահատում՝ որոշող ու զարգացնող:
2. Որոշող գնահատումը վերահսկում է ուսման որակը, որոշում է աշակերտների առաջադիմության մակարդակը, Ազգային ուսումնական պլանով սահմանված նպատակների համաձայն: Որոշող գնահատման ժամանակ գրվում է միավոր:
3. Զարգացնող գնահատումը ստուգում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում ուսման որակի բարելավմանը: Զարգացնող գնահատման ժամանակ կիրառվում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են բանավոր մեկնաբանությունը, խորհուրդ-խրատը, դիտարկման թերթիկը, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման գծապատկերը և այլն:
4. Որոշող և զարգացնող գնահատումների նկարագիրը

	Զարգացնող	Որոշող
Նպատակը	<p>Ուսման որակի բարելավում</p> <p>Աշակերտի զարգացմանը աջակցում</p>	<p>Ուսման որակի վերահսկում</p> <p>Աշակերտի առաջադիմության մակարդակի որոշում, ըստ Ազգային ուսումնական</p>

Միավորներ	Գնահատման մակարդակներ
-----------	-----------------------

		<p>ծրագրով սահմանված նպատակների</p> <p>Ակադեմիական առաջադիմության մակարդակի որոշում</p>
Գնահատման առարկան	Ուսման գործընթացը	Ուսման արդյունքը
Գնահատման արդյունքում կայացրած որոշում	Առաջընթացին նպաստելու համար տարբերակ տիվությունների ընտրություն, ուսուցման ռազմավարության փոփոխում, խորհուրդ-խրատներ և այլն	Հաջորդ փուլ (դասարան/աստիճան) փոխադրել/չփոխադրել
Հաջողության չափանիշների սահմանումը	Կոնկրետ աշակերտի առաջընթացի օրինակով (սեփական ձեռքբերումների համեմատ՝ ինչ մակարդակի էր տիրապետում, ինչ մակարդակի է տիրապետում)	Այն բանի հիման վրա, թե որքանով է հասել չափորոշչով սահմանված արդյունքներին (բոլորի համար ընդհանուր, չափորոշչով սահմանված նորմերի համեմատ)
Գնահատման եղանակները	Ինքնագնահատման (փոխադարձ գնահատման) աղյուսակ, հարցարան, բառային (բանավոր, գրավոր) մեկնաբանություն, կարողության զարգացման մակարդակի նկարագիր:	Միավոր

10	Բարձր
9	
7	Միջինից բարձր
6	
5	Միջին
4	
3	Միջինից ցածր
2	
1	Ցածր

Հոդված 17. Ակադեմիական նվաճումների մակարդակներն ու գնահատման համակարգը

1. Աշակերտների ակադեմիական նվաճումները գնահատվում են տասը միավորանոց համակարգով՝ ըստ հինգ մակարդակի:
2. I-IV դասարաններում աշակերտը միավորներով չի գնահատվում: Այս դասարաններում՝ կիսամյակի վերջին և տարվա վերջին, դասարանի դասղեկը, հիմնվելով իր ունեցած և մյուս ուսուցիչներից ստացած տեղեկությունների վրա, պետք է գրի համառոտ, ամփոփիչ գրավոր գնահատում, որտեղ պետք է բնութագրի աշակերտին, նշի նրա հաջողությունները և մատնանշի, թե սեփական հնարավորությունների առավելագույնս դրսևորման համար ինչու է աշակերտին անհրաժեշտ վարժվել:
3. V-XII դասարաններում աշակերտը գնահատվում է տասը միավորանոց համակարգով:
4. Աշակերտը գնահատական պետք է ստանա ինչպես Ազգային ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկաներից, այնպես էլ կամրնտրական առարկաներից:
5. V-XII դասարաններում «Սպորտ» առարկայից աշակերտը գնահատվում է ստուգարքի սկզբունքով՝ ստուգարք ստացել է/ստուգարք չի ստացել:
6. Լրացուցիչ պարտադիր առարկաների գնահատումը չի հաշվարկվում տարեկան միավորները հաշվելիս:
7. «Աբիրուրի ժամի» շրջանակներում հնարավոր է, որ աշակերտը գնահատվի զարգացնող գնահատումով:

Հոդված 18. Առարկայի կիսամյակային միավորի բաղադրամասերը

1. Կիսամյակի ընթացքում աշակերտները գնահատվում են ըստ հետևյալ երեք բաղադրամասերի.

ա) տնային առաջադրանք

բ) դասարանական առաջադրանք

գ) ամփոփիչ առաջադրանք

2. Գնահատման երեք բաղադրամասերն էլ միանման կշիռ ունեն:

3. Տնային և դասարանական առաջադրանքների բաղադրամասերում կիրառվում է ինչպես որոշող, այնպես էլ զարգացնող գնահատումը:

4. Ամփոփիչ առաջադրանքի բաղադրամասում պարտադիր է որոշող գնահատման կիրառումը:

5. Ազգային ուսումնական պլանը յուրաքանչյուր առարկայի համար սահմանում է կիսամյակի ընթացքում անցկացվելիք ամփոփիչ առաջադրանքների պարտադիր նվազագույն քանակը: Այդ բաղադրամասով գնահատելիս.

ա) չափորոշի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է կիրառել ամփոփիչ առաջադրանքների տարբեր տեսակներ (շարադրություն, զեկուցում, ռեֆերատ, նախագիծ, արտագնա աշխատանք, լաբորատոր հետազոտություն, կերպարվեստի ու կիրառական արվեստի նմուշ և այլն):

բ) Աշակերտը պարտավոր է կատարել դասարանում անցկացված ամփոփիչ բոլոր առաջադրանքները (Ազգային ուսումնական պլանով սահմանվածի պարտադիր նվազագույնը և դպրոցի կողմից լրացուցիչ սահմանվածը, վերջինիս գոյության դեպքում):

գ) Եթե աշակերտը բացակայության պատճառով չի կատարում որևէ ամփոփիչ առաջադրանք, ապա դպրոցը պարտավոր է նրան տալ բացթողնված ամփոփիչ առաջադրանքները վերականգնելու հնարավորություն: Ամփոփիչ աշխատանքի ժամկետը և նրա անցկացման ձևը սահմանվում է դպրոցական ուսումնական պլանով:

Հոդված 19. Որոշող գնահատման միավորների տեսակները

Հանրակրթական համակարգում կիրառվում են որոշող գնահատման հետևյալ տեսակները.

ա) Առարկայի ընթացիկ և ամփոփիչ միավորներ՝ տնային, դասարանական ու ամփոփիչ բաղադրամասերի միավորներ, որոնք աշակերտն ստանում է կիսամյակի ընթացքում:

բ) Առարկայի կիսամյակային միավոր՝ առարկայից ստացած գնահատումը յուրաքանչյուր կիսամյակում (կիսամյակային քննություն հանձնելու դեպքում, հաշվարկվում է նրա նախատեսմամբ):

գ) Առարկայի տարեկան միավոր՝ կիսամյակային միավորներից բխող գնահատում առարկայից: Տարեկան միավորում կարող է արտացոլվել նաև տարեկան քննության միավորը, եթե նման քննություն նախատեսված է դպրոցական ուսումնական պլանով և դպրոցի կողմից սահմանված է, որ այն պետք է անդրադառնա տարեկան միավորի վրա:

դ) Ընդհանուր տարեկան միավոր՝ առարկաների տարեկան միավորներից բխող գնահատում:

ե) Աստիճանի ընդհանուր միավոր՝ ընդհանուր կրթության որևէ աստիճանի (տարրական, բազային, միջնակարգ) ընդհանուր գնահատում:

Հոդված 20. Միավորների հաշվարկման կարգը

1. Առարկայի կիսամյակային միավորի հաշվարկման կարգը.

ա) Երեք բաղադրամասերից (տնային, դասարանային, ամփոփիչ) աշակերտի ստացած կիսամյակային միավորների գումարը պետք է բաժանվի ստացված միավորների քանակի վրա:

բ) Ստացված միավորը պետք է կլորացվի ամբողջի ճշտությամբ (օրինակ՝ 6.15-ը կլորացվում է մինչև 6-ը, 7.49-ը կլորացվում է մինչև 7-ը, 8.5-ը կլորացվում է մինչև 9-ը):

գ) Եթե աշակերտը չի կատարել բոլոր ամփոփիչ առաջադրանքները, այդ դեպքում, նրա կիսամյակային միավորը հաշվելու համար, երեք բաղադրամասերից ստացած միավորների գումարը պետք է բաժանել ստացած միավորների և չկատարված ամփոփիչ առաջադրանքների քանակի գումարի վրա:

2. Առարկայի տարեկան միավորի հաշվարկման կարգը.

ա) Առարկայի տարեկան միավորը հաշվարկելու համար առարկայի կիսամյակային միավորների գումարը պետք է բաժանել 2-ի:

բ) Առարկայի տարեկան միավորը կլորացվում է ամբողջի ճշտությամբ (օրինակ՝ 7.25-ը կլորացվում է մինչև 7-ը, 4.49-ը՝ մինչև 4-ը, 9.5-ը՝ մինչև 10-ը):

գ) Եթե դպրոցական ուսումնական պլանը նախատեսում է տարեկան քննության անցկացում, և սահմանված է, որ քննության միավորը նույնպես պետք է անդրադառնա տարեկան միավորի վրա, ապա առարկայի տարեկան միավորը երեք միավորների (երկուսը՝ առարկայի կիսամյակայինը, երրորդը՝ քննության) միջին թվաբանականն է (կլորացված ամբողջի ճշտությամբ):

3. Ընդհանուր տարեկան միավորը հաշվարկելու կարգը.

ա) Ընդհանուր տարեկան միավորը հաշվարկելու համար պետք է հանրագումարվեն Ազգային ուսումնական պլանով կոնկրետ դասարանի համար նախատեսված բոլոր պարտադիր առարկաների տարեկան միավորները (միջնակարգ աստիճանում, նաև դպրոցական ուսումնական պլանով սահմանված կամընտրական առարկաների միավորները՝ պարտադիր առարկաների տարեկան միավորների հետ միասին) և ընդհանուր գումարը բաժանվի միավորների քանակի վրա:

բ) Ընդհանուր տարեկան միավորը կլորացվում է տասնորդականի ճշտությամբ (օրինակ՝ 7.14-ը կլորացվում է մինչև 7.1-ը, 8.15-ը՝ մինչև 8.2-ը):

4. Աստիճանի ընդհանուր միավորի հաշվարկման կարգը.

ա) Աստիճանի ընդհանուր միավորը հաշվարկվում է նույն սկզբունքով, որով հաշվարկվում է ընդհանուր տարեկան միավորը. հանրագումարվում են աստիճանի ընթացքում սովորած բոլոր առարկաների տարեկան միավորները (օր.՝ Մաթեմատիկա՝ 10-րդ դասարան, Մաթեմատիկա՝ 11-րդ դասարան, Մաթեմատիկա՝ 12-րդ դասարան, Վրաց լեզու՝ 10-րդ դասարան, Վրաց լեզու՝ 11-րդ դասարան, Վրաց լեզու՝ 12-րդ դասարան և այլն), այնուհետև այդ գումարը բաժանվում է միավորների ընդհանուր քանակի վրա:

բ) Աստիճանի ընդհանուր միավորը կլորացվում է տասնորդականի ճշտությամբ (օր.՝ 6.43-ը կլորացվում է մինչև 6.4-ը, 7.58-ը՝ մինչև 7.6-ը):

Հոդված 21. Դասարանի ու աստիճանի հաղթահարումը

1. Դասարանը համարվում է հաղթահարված, եթե աշակերտի յուրաքանչյուր առարկայի տարեկան միավորը 5 է կամ 5-ից ավելի, որը նրան տալիս է հաջորդ դասարան փոխադրվելու իրավունք:

2. Տարրական աստիճանը համարվում է հաղթահարված, եթե աշակերտի ընդհանուր աստիճանի միավորը (կլորացնելուց հետո) 5.0 է կամ ավելի, որը նրան տալիս է բազային աստիճանում ուսումը շարունակելու իրավունք:

3. Բազային աստիճանը հաղթահարված է համարվում, եթե աշակերտի ընդհանուր աստիճանի միավորը (կլորացնելուց հետո) 5.0 է կամ ավելի, որը նրան տալիս է բազային կրթության վկայական ստանալու կամ միջնակարգ աստիճան փոխադրվելու իրավունք:

4. Միջնակարգ աստիճանը հաղթահարված է համարվում, եթե աշակերտի ընդհանուր աստիճանի միավորը (կլորացնելուց հետո) 5.0 է կամ ավելի, որը նրան դպրոցի ավարտական քննություններին մասնակցելու իրավունք է տալիս:

Հոդված 22. Բացականեր

1. Եթե բազային/միջնակարգ աստիճանում աշակերտը կիսամյակի ընթացքում բաց է թողել ուսումնական տարվա ընթացքում կոնկրետ առարկայի համար հատկացված ժամերի 1/4-ը և ավելին, բայց 1/2-ից պակաս, նրա առարկայի կիսամյակային միավորից հանվում է 20%-ը: Եթե աշակերտին չի բավարարում ստացած գնահատականը, նրան հնարավորություն է տրվում հանձնել դպրոցի կազմակերպած կիսամյակային քննությունը:

2. Եթե միջնակարգ աստիճանում աշակերտը բաց է թողել մեկ ուսումնական տարվա ընթացքում կոնկրետ առարկայի համար նախատեսված ժամերի 1/2-ը և ավելին, նա այդ առարկայից չի ստանա առարկայի տարեկան միավոր: Նման դեպքում աշակերտը գնահատվում է միայն էքստեռն քննություն հանձնելու հիման վրա:

Եթե աշակերտը բազային աստիճանում բաց է թողել մեկ ուսումնական տարվա ընթացքում կոնկրետ առարկայի համար նախատեսված ժամերի 1/2-ը և ավելին, աշակերտների գնահատման կարգը սահմանվում է դպրոցական ուսումնական պլանով:

3. Աշակերտների բացակաները, այդ թվում աբիտուրի ժամի բացակաները, հաշվարկվում են դասամատյանում: Դասերին աշակերտների հաճախման վերաբերյալ ամենօրյա հաշվարկ ներկայացնելու պատասխանատուն առարկայի ուսուցիչն է: Պետք է նշել, որ աբիտուրի բացթողնված ժամերը չեն հաշվվում սույն հոդվածի առաջին և երկրորդ կետերով նախատեսված նպատակների համար:

4. Դպրոցը պարտավոր է տանը ուսուցման պայմանակարգի անցկացնել այն աշակերտներին, որոնց բուժման համար անհրաժեշտ է ավելի քան մեկ ամիս, և դա հայտնի է դառնում բժշկական հաստատության կողմից դպրոցին տրված տեղեկանքի հիման վրա: Նման դեպքում, տնային ուսուցմանն անցնելու պահից, սույն հոդվածի առաջին կետի պահանջները չեն տարածվում աշակերտի վրա:

5. Այն աշակերտների համար, որոնք մասնակցում են միջազգային նշանակության մարզական և գեղարվեստական միջոցառումների.

ա) Դպրոցից մեկ շաբաթ բացակայելու դեպքում, եթե դպրոցը նշվածի մասին պաշտոնապես նախօրոք տեղեկացված է, դպրոցի տնօրենն իրավագոր է որոշում

կայացնել սույն հոդվածի առաջին կետի պահանջները կոնկրետ աշակերտի վրա չտարածելու վերաբերյալ:

բ) Դպրոցից ավելի քան մեկ ամիս բացակայելու դեպքում, եթե դպրոցը նշվածի մասին պաշտոնապես տեղեկացված է, դպրոցի տնօրենը կամ աշակերտի ծնողը գրավոր դիմում է Նախարարությանը, որն իրավագոր է որոշում կայացնել սույն հոդվածի առաջին կետի պահանջները կոնկրետ աշակերտի վրա չտարածելու վերաբերյալ:

Հոդված 23. Քննության տեսակները

1. Հանրակրթական համակարգում հնարավոր է անցկացնել հետևյալ տիպի քննություններ.

ա) Կիսամյակային քննություն

բ) Տարեկան (ուսումնական տարվա ավարտական) քննություն

գ) Աշնանային քննություն

դ) Էքստեն ձևով հաղթահարելու քննություն

ե) Դպրոցի ավարտական քննություն

2. Կիսամյակային քննությունը նշանակվում է.

ա) Այն դեպքում, երբ կիսամյակի ընթացքում առարկայի համար հատկացված ժամերի 1/4-ը կամ ավելին բաց թողնելու պատճառով աշակերտի կիսամյակային միավորից պակասում է 20%-ը, և աշակերտը ցանկանում է ուղղել գնահատականը, կամ նա համարում է, որ ավելի բարձր գնահատականի է արժանի: Որպեսզի աշակերտը պահպանի առարկայի կիսամյակային այն միավորը, որն ուներ մինչև դրա 20%-ով նվազեցնելը, քննության ժամանակ պետք է ստանա նույն միավորը կամ ավելի բարձր: Եթե աշակերտը քննության ժամանակ ստանա ավելի ցածր միավոր, քան նա ուներ մինչև 20%-ով նվազեցնելը, ապա նրա առարկայի կիսամյակային միավորը կհաշվարկվի հետևյալ կերպ. 20%-ով նվազեցված կիսամյակային միավորին ավելանում է քննության միավորը և գումարը բաժանվում է երկուսի:

բ) Այն դեպքում, երբ աշակերտը գտնում է, որ ինքն ավելի բարձր գնահատման է արժանի, աշակերտի ծնողը գրավոր դիմում է դպրոցի տնօրենին: Տնօրենը քննարկում է հարցը և որոշում է կայացնում աշակերտին քննությանը մասնակցելու իրավունք տալու/չտալու վերաբերյալ: Եթե աշակերտն իրավունք է ստանում մասնակցել քննությանը, ապա առարկայի կիսամյակային միավորը հաշվարկվում է հետևյալ կարգով. քննության միավորը գումարվում է առարկայի կիսամյակային միավորին, այնուհետև գումարը բաժանվում է երկուսի:

3. Կիսամյակային քննությունը նշանակվում է կիսամյակն ավարտելուց հետո ոչ ուշ, քան երկու շաբաթվա ընթացքում:

4. Տարեկան քննության նշանակման (չնշանակման) հարցը վճռում է դպրոցը: Նշվածը պետք է արտացոլվի դպրոցական ուսումնական պլանում:

5. Տարեկան քննություն կարելի է նշանակել միայն բազային և/կամ միջնակարգ աստիճանում: Եթե դպրոցը ցանկանում է առարկայի տարեկան քննություն նշանակել, ապա մինչև ուսումնական տարվա սկիզբը պետք է սահմանի, թե որ դասարանում/դասարաններում և որ առարկայից/առարկաներից պետք է անցկացվի

այդ քննությունը, և այդ քննությունից ստացած միավորը կանդրադառնա արդյոք առարկայի տարեկան միավորի վրա:

6. Եթե դպրոցական ուսումնական պլանով սահմանված է, որ տարեկան քննության միավորն անդրադառնում է առարկայի տարեկան միավորի վրա, ապա, առարկայի տարեկան միավորը հաշվելիս, տարեկան քննության միավորը գումարվում է առարկայի կիսամյակային միավորներին և գումարը բաժանվում երեքի:

7. Եթե աշակերտի տարեկան առարկայական միավորը 5-ից պակաս է, դպրոցը պարտավոր է այդ աշակերտի համար տվյալ առարկայից աշնանային քննություն նշանակել:

8. Աշնանային քննություն անցկացնելու կարգը սահմանվում է դպրոցական ուսումնական պլանով:

9. Մինչև աշնանային քննությունը դպրոցը պարտավոր է կոնսուլտացիաներ անցկացնել աշակերտների համար այն առարկայից (առարկաներից), որից նշանակված է վերոնշյալ տիպի քննություն:

10. Աշակերտը առարկայի/առարկաների տարեկան գնահատականն ստանում է աշնանային քննության հիման վրա (աշնանային քննության միավորը դառնում է առարկայի տարեկան միավոր):

11. Էքստեռնի կարգով ընդհանուր կրթություն ստանալու օրենքը և պայմանները սահմանվում են Օրենսդրությամբ:

12. Բացի այն անձանցից, ովքեր ընդհանուր կրթության առանձին դասարանի/դասարանների ծրագրերը հիմնականում ինքնուրույն են հաղթահարում և էքստեռնի քննություն են հանձնում համապատասխան կրթությունը հաստատելու համար, ինչը նրանց հնարավորություն է տալիս հաջորդ դասարանում/աստիճանում շարունակել ուսումը կամ բազային/միջնակարգ կրթության վկայական ստանալ, էքստեռնի քննություն հանձնում են նաև այն աշակերտները, որոնք միջնակարգ աստիճանում բաց են թողել ուսումնական տարվա ընթացքում կոնկրետ առարկայի համար հատկացված ժամերի 1/2-ը և ավելին:

13. Լրիվ ընդհանուր կրթությունը հաստատող փաստաթուղթ՝ ավարտական վկայական, ստանալու համար, աշակերտը պետք է հանձնի դպրոցի ավարտական քննությունները:

14. Դպրոցի ավարտական քննությունների անցկացման օրերը, կարգն ու պայմանները սահմանվում են Օրենսդրությամբ:

15. Դպրոցի ավարտական քննություններին մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար, աշակերտը պետք է հաղթահարի միջնակարգ աստիճանը:

Հոդված 24. Ընդհանուր կրթության տարբեր աստիճանների ավարտումը հաստատող փաստաթղթերը

Ընդհանուր կրթության տարբեր աստիճանների ավարտումը հաստատող փաստաթղթերի տեսակները և դրանց տրման կարգը սահմանվում է Օրենսդրությամբ:

Հոդված 25. Աշակերտի ակադեմիական նվաճումների ճանաչումը

1. Գնահատման բարձր մակարդակը (9 և 10 միավոր) ենթադրում է ուսումնական տարվա կամ աստիճանի գերազանց ավարտում: Գերազանցիկ աշակերտներին խրախուսելու կարգը, ըստ ցանկության, սահմանվում է դպրոցական ուսումնական պլանով:
2. Աշակերտը, որի միջնակարգ աստիճանի ընդհանուր գնահատականը 10 է՝ առանց կլորացնելու, և նա հաջողությամբ հանձնել է դպրոցի ավարտական քննությունները, ստանում է լրիվ կրթության ոսկե մեդալակրի ավարտական վկայական:
3. Աշակերտը, որի միջնակարգ աստիճանի ընդհանուր գնահատականը մինչև 10-ը կլորացնելուց հետո 9.8 ու 9.9 է, և նա հաջողությամբ հանձնել է ավարտական քննությունները, ստանում է ընդհանուր կրթության արծաթե մեդալակրի ավարտական վկայական:
4. Այն անձին, որն էքստեռնի կարգով հաջողությամբ հաղթահարել է լրիվ կրթության միջնակարգ աստիճանի դասարանի/դասարանների կամ միջնակարգ աստիճանի առանձին դասարաններում ընդգրկվող առարկայի/առարկաների հանրակրթական ծրագրերը, ոսկե և արծաթե մեդալակրի վկայականներ չեն տրվի:

Գլուխ V. Ինկյուզիվ կրթություն

Հոդված 26. Ինկյուզիվ կրթություն

Ինկյուզիվ կրթությունը ենթադրում է հատուկ կրթական անհաժեշտություններով աշակերտի ներգրավում հանրակրթական գործընթացի մեջ իր հասակակիցների հետ մեկտեղ:

Հոդված 27. Հատուկ կրթական անհրաժեշտություններով աշակերտ

1. Հատուկ կրթական անհրաժեշտություններով է այն աշակերտը (այսուհետև՝ ՀԿԱ աշակերտ), որն իր հասակակիցների մեծամասնության համեմատ ուսման հետ կապված բարդություններ ունի, չի կարողանում հաղթահարել ազգային ուսումնական պլանով նախատեսված նվազագույն պահանջները և հատուկ կրթական ծառայության կարիք է զգում, մասնավորապես, Ազգային ուսումնական պլանի փոփոխման կամ անհատական ուսումնական պլանի մշակման:
2. ՀԿԱ աշակերտը այն աշակերտն է, որն ունի.
 - ա) ֆիզիկական խախտում
 - բ) մտավոր խախտում
 - գ) սենսորային խախտում (լսողության կամ տեսողության)
 - դ) խոսքային խախտում
 - ե) վարքային և հուզական խախտում
 - զ) երկարաժամկետ հոսպիտալացման անհրաժեշտություն
 - է) սոցիալական բարդ գործոնների պատճառով չի կարող հաղթահել Ազգային ուսումնական պլանով նախատեսված պահանջները:

Հողված 28. Անհատական ուսումնական պլան

1. Անհատական ուսումնական պլանը ՀԿԱ աշակերտի համար Ազգային ուսումնական պլանի հիման վրա մշակված պլան է, որը դպրոցական ուսումնական պլանի մասն է կազմում: Այն առավելագույնս պետք է նախատեսի ՀԿԱ աշակերտի բոլոր կրթական անհրաժեշտությունները և դրանց բավարարման ուղիները, աշակերտի հետաքրքրություններն ու անհատական հնարավորությունները, ինչպես նաև այն բոլոր լրացուցիչ ակտիվությունները, որոնք պարտադիր են պլանով նախատեսված նպատակներին հասնելու համար: Անհատական ուսումնական պլանը կազմվում է մինչև ուսումնական տարին սկսվելը՝ ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ կամ հատուկ աշակերտի հատուկ կրթության կարիքը հայտնաբերելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Անհատական ուսումնական պլան կարելի է մշակել բոլոր առարկաների կամ որևէ կոնկրետ առարկայի/առարկաների համար, ՀԿԱ աշակերտի կարիքներին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ՀԿԱ աշակերտի համար անհատական ուսումնական պլանի սահմաններում մանրամասնորեն պետք է պլանավորվի/սահմանվի.

ա) Որ առարկայից/առարկաներից է աշակերտը անհատական ուսումնական պլան մշակելու կարիք զգում: Ընտրված առարկաների համար սահմանվում են սովորելու արդյունքները, ուսուցման ռազմավարությունները և ուսումնական (ինչպես դասարանական այնպես էլ տնային) ակտիվությունները:

բ) Ժամանակը, որն ուսուցիչը կտրամադրի ընտրված նպատակին, ակտիվությանը թե նյութին:

գ) Աշակերտին անհրաժեշտ լրացուցիչ և/կամ անհատական պարապմունքները, պարապմունքների ժամանակը, տեղը և տևողությունը:

դ) Լրացուցիչ և/կամ անհատական պարապմունքների համար պատասխանատու անձը, ՀԿԱ աշակերտի համար լրացուցիչ օժանդակ անձնակազմի (հիվանդապահի, դայակի) անհրաժեշտությունը:

ե) Ուսումնական գործընթացում կիրառելիք նյութ (դասագրքեր և աշակերտին անհրաժեշտ լրացուցիչ կրթական նյութեր) և նյութի ապահովման համար պատասխանատու անձ (որը կարող է լինել նաև ծնողը):

զ) Աշակերտին անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական ռեսուրսներ (ավտոբուսով սպասարկելու անհրաժեշտություն, համակարգչից օգտվելու անհրաժեշտություն, նրան հարկավոր դպրոցական կահույքի, հանգստի անհրաժեշտություն և այլն):

4. Անհատական ուսումնական պլանը պետք է տեղեկություններ նախատեսի երեխայի ուժեղ ու թույլ կողմերի մասին՝ ըստ ակադեմիական, ճանաչողական, սոցիալական, վարքային, հուզական, շարժական և այլ ոլորտների:

5. Ուսման գործընթացում բարդություններ ի հայտ գալուց հետո, դպրոցը պետք է ապահովի ինկյուզիվ աշակերտի հնարավորությունների խորքային գնահատում: Անհրաժեշտության դեպքում, ՀԿԱ աշակերտի խորքային գնահատման և նրա կրթության հետ կապված երաշխավորությունների համար դպրոցը կարող է դիմել Նախարարության ինկյուզիվ կրթության բազմամասնագիտական խմբին (այսուհետև՝ բազմամասնագիտական խումբ): Յուրաքանչյուր ինկյուզիվ աշակերտի համար դպրոցը պետք է սահմանի անհատական ուսումնական պլանը մշակող աշխատանքային խումբ

(հետագայում՝ ԱՌԻՊ խումբ), որը կապահովի ՀԿԱ աշակերտի համար անհատական ուսումնական պլանի կազմում և կօժանդակի դրա իրագործմանը:

6. ԱՌԻՊ խմբում պետք է միավորվեն այն մանկավարժները, որոնք անմիջականորեն իրենք են դասավանդում աշակերտին, ինչպես նաև ծնողը/ծնողները, դպրոցի վարչության անդամը/անդամները, հոգեբան, լոգոպեդ կամ հատուկ ուսուցիչ, եթե դպրոցում կա այդպիսին:

7. ԱՌԻՊ խումբը պետք է ունենա համակարգող: Համակարգողը վարում է խմբի աշխատանքը և պատասխանատու է խմբի աշխատանքի համար: Նպատակահարմար է, որ խմբի համակարգողը լինի ՀԿԱ աշակերտի դասուցի:

8. Անհատական ուսումնական պլանը կազմելուց հետո, պետք է անցկացվի ԱՌԻՊ խմբի անդամների առնվազն մեկ հանդիպում ընթացիկ կիսամյակում և յուրաքանչյուր կիսամյակի վերջում մեկ ամփոփիչ հանդիպում: Հանդիպումների ժամանակ պետք է քննարկվեն պլանի կատարման ընթացքը և պլանում կատարվելիք փոփոխությունները (եթե դրա կարիքը կա): Պլանի իրականացումը վերահսկելու հետևանքով, պլանը պարբերական փոփոխությունների է ենթարկվում:

9. ԱՌԻՊ խմբի հանդիպումների ժամանակ կազմվում են նիստի արձանագրություններ: Նիստի յուրաքանչյուր արձագրություն պահպանվում է աշակերտի անձնական գործում:

10. Անհատական ուսումնական պլանը կազմելուց հետո անմիջապես հաստատելու պետք է ներկայացնել մանկխորհրդին:

11. Ուսումնական տարվա վերջին ԱՌԻՊ խումբը դպրոցի վարչությանը պետք է ներկայացնի աշակերտի մասին գոյություն ունեցող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պետք է տեղադրվեն նրա անձնական գործում (անհատական պլանը, բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքները և այլն):

Հոդված 29. ՀԿԱ աշակերտի ակադեմիական առաջադիմության գնահատումը, հաճախումը և բացակայությունները

1. ՀԿԱ աշակերտի ակադեմիական առաջադիմության գնահատումը կատարվում է նույն սկզբունքով, որով կատարվում է ցանկացած այլ աշակերտի ակադեմիական առաջադիմության գնահատումը: Եթե աշակերտը կրթությունը ստանում է անհատական ուսումնական պլանով, ապա գնահատվում է անհատական ուսումնական պլանով սահմանված նպատակներին հասնելու նրա մակարդակը: ՀԿԱ աշակերտը, որը հաջողությամբ հաղթահարում է անհատական ուսումնական պլանը, գնահատվում է բարձր միավորով:

2. ՀԿԱ աշակերտի կիսամյակային, ընդհանուր տարեկան և աստիճանային ընդհանուր միավորները հաշվարկվում են նույն սկզբունքով՝ սույն պլանի 20-րդ հոդվածին համապատասխան:

3. Որպես բացառություն թույլատրվում է, որ ՀԿԱ աշակերտը չունենա կիսամյակային գնահատում մեկ կամ մի քանի առարկայից: Բացառությունը թույլատրվում է բազմամասնագիտական խմբի եզրահանգման հիման վրա: Բացառության դեպքում, աշակերտի առարկայի կիսամյակային միավորը հանդիսանում է առարկայի տարեկան միավորը: Եթե ՀԿԱ աշակերտը որևէ առարկայից չի գնահատվում տվյալ կիսամյակում, դա չի խանգարի նրան փոխադրվել հաջորդ դասարան:

4. Եթե ՀԿԱ աշակերտը ունի խոցելի առողջական վիճակ և նրա անձնական գործում գոյություն ունի այդ փաստը հաստատող վկայական, ապա ՀԿԱ աշակերտի նկատմամբ չեն տարածվում սույն պլանի 22-րդ հոդվածի առաջին ու երկրորդ կետով նախատեսված միջոցառումները:

5. Եթե դպրոցական ուսումնական պլանով սահմանված է տարեկան քննության անցկացում և որոշված է, որ քննություն պետք է հանձնեն նաև այն ՀԿԱ աշակերտները, որոնք սովորում են անհատական ուսումնական պլանով, ապա դպրոցը պետք է կատարի քննական նյութի հարմարեցում՝ ստեղծի անհատական ուսումնական պլանի վրա հիմնված անհատական քննական ծրագիր:

Հոդված 30. ՀԿԱ աշակերտների ուսուցանումը տանը

1. Այն դեպքում, եթե աշակերտը երկարատև բուժման կարիք ունի, կամ թե առողջության վատթարացման պատճառով չի կարողանում դպրոց հաճախել, դպրոցը պետք է դիմի բազմամասնագիտական խմբին, որի եզրահանգման հիման վրա ինկյուզիվ աշակերտի կրթությունը պետք է ապահովվի տանը ուսուցանելու մեթոդով: Նման դեպքում աշակերտն ընդունվում է դպրոց, բայց չի հաճախում դասերին: Դպրոցը նրա համար կազմում է ուսուցման հատուկ ծրագիր, ըստ որի իրականացվում է ՀԿԱ ուսուցում տանը:

2. Բազմամասնագիտական խումբը պետք է սահմանի և դպրոցի ու ծնողի հետ համաձայնեցնի այն առարկաների ցուցակը, որը տանը ուսուցումով պետք է հաղթահարի ՀԿԱ աշակերտը:

3. Տանը ուսուցանելու մեթոդով նախատեսված ուսումնական պլանը առավելագույնս պետք է մոտեցված լինի Ազգային ուսումնական պլանին: Դպրոցը պարտավոր է սահմանել կարգացուցակ, որի համաձայն առարկայի ուսուցիչը և հատուկ ուսուցիչը կիրականացնեն իրենց այցերը ՀԿԱ աշակերտի մոտ: Դպրոցը /((ԱՌԻՊ) խումբը պետք է անցկացնի տանը ուսուցման գործընթացի մշտադիտարկում:

4. Տանը ուսուցման գործընթացում ընդգրկված պետք է լինի ՀԿԱ աշակերտի ծնողը, որը կօգնի աշակերտին ամենօրյա առաջադրանքները կատարելու գործում:

5. Տանը ուսուցանման ընթացքում ինտերնետի ու տեսախորհրդաժողովների կիրառումը, եթե դպրոցն ունի դրա հնարավորությունը, արդյունավետ է ժամանակը ու ֆինանսները խնայելու նպատակով: Տեսախորհրդաժողովի կիրառումը հնարավորություն կտա ուսուցչին, այցերի միջև ընկած ժամանակամիջոցում, առանց դպրոցից դուրս գալու, դիտարկել ՀԿԱ աշակերտի տնային պարապմունքների գործընթացը, խորհուրդներ տալ ՀԿԱ աշակերտին ու նրա ծնողին, խնամակալին կամ այն անձին, որը պատասխանատու է աշակերտի՝ տանը պարապելու համար:

6. ՀԿԱ աշակերտի նվազագույն ծանրաբեռնվածությունը տանը ուսուցման դեպքում.

Դասարան	I-IV	V-VI	VII-IX	X-XII
Նվազագույն (աստղագիտական) ժամերը շաբաթվա ընթացքում	5 ժ	6 ժ	8 ժ	8 ժ

Գլուխ VI. Հիմնական մեթոդական կողմնորոշիչները

Հոդված 31. Աշակերտին կողմնորոշված մոտեցում

1. Յուրաքանչյուր աշակերտ եզակի է և տարբերվում է իր անհատական ֆիզիկական ու հոգեբանական հատկանիշներով, ընդունակություններով, հույզերով, հետաքրքրություններով, անձնական փորձով, ակադեմիական անհրաժեշտություններով և սովորելու ոճով, ինչը պետք է նկատի առնվի ուսանում-ուսուցման ժամանակ:
2. Ուսուցումը պետք է ընթանա դրական և կարգավորված միջավայրում, որտեղ մեծ կարևորություն է շնորհվում դրական հարաբերություններին և ինտերակցիային, որտեղ աշակերտը ճանաչված է, գնահատված և պատասխանատու է իր ուսման ու զարգացման համար:
3. Ուսանումը գիտելիքներ ձեռք բերելու գործընթաց է, որում աշակերտն ընդգրկված է ակտիվորեն և, որը հիմնվում է աշակերտի ունեցած գիտելիքի, փորձի ու հայացքների վրա:

Հոդված 32. Ուսանում-ուսուցման գործընթացում համահավասարության սկզբունքի պահպանումը

1. Անթույլատրելի է աշակերտներին ըստ ակադեմիական առաջադիմության բաշխել դասարաններում: Անթույլատրելի է նաև, որ դպրոցն ընդունի դպրոցական պատրաստականությամբ աչքի ընկնող ու բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին և հրաժարվի ընդունել մյուսներին: Բացառություն կարելի է թույլ տալ սույն պլանի 14-րդ հոդվածով սահմանված դպրոցների համար:
2. Զարգացման համահավասար հնարավորություններ տալու նպատակով՝ դպրոցը աշակերտներին պետք է առաջարկի բազմաբնույթ ուսումնական գործընթաց: Ուսումնական գործընթացի բազմերանգությունը ենթադրում է բազմազան մեթոդների, մոտեցումների, ռազմավարությունների, հիմնախնդիրները լուծելու ուղիների և ակտիվությունների տեսակների կիրառում:

Հոդված 33. Խորացված ուսուցում

Հաստատուն ու դինամիկ գիտելիքներ հաղորդելու համար, դպրոցը պետք է ապահովի խորացված ուսուցում, ինչը ենթադրում է ուսումնական նյութի աստիճանական ու բազմակողմանի հաղորդում, նոր հարցերի, հասկացությունների հիմնավոր և տարբեր համատեքստերում քննարկում, միջառարկայական կապերի հայտնաբերում և ընդհանուր տեսակետների մշակում:

Հոդված 34. Աշակերտի պատճառաբանվածության մեծացումը

Աշակերտի պատճառաբանվածության մեծացումը կարևոր մանկավարժական խնդիր է: Ուսուցման գործընթացում պետք է նկատի առնել, որ աշակերտի պատճառաբանվածությունն աճում է, եթե նա տեսնում է, որ ուսուցչի համար առաջնայինը աշակերտի առաջընթացին աջակցելն է, և ընդհակառակը՝ շարժառիթը նվազում է, երբ համարում է, որ ուսուցչի համար առաջնայինը նրա արդյունքի

քննադատելն է: Աշակերտի պատճառաբանվածությունը մեծանում է նաև այն դեպքում, երբ նա տեսնում է առաջադրանքի նպատակը և համոզվում նրա կարևորության մեջ: Կարևոր է, որ ուսուցիչը բացատրի, թե ինչ նպատակ է հետապնդում կոնկրետ առաջադրանքը: Անհրաժեշտ է, որ աշակերտը տեսնի դպրոցում ընթացող գործունեության և դպրոցից դուրս ընթացող կյանքի միջև կապը:

Հոդված 35. Կարգապահություն

1. Դպրոցն աշակերտների մեջ պետք է զարգացնի սեփական պարտականությունները գիտակցելու և հասարակական կարգապահությունը պահպանելու կարողություններ ու հմտություններ: Վճռորոշ է ուսուցչի օրինակը դպրոցում հանգիստ ու գործարար միջավայր ստեղծելու գործում: Այն վարչական միջոցները, որոնք դպրոցը կիրառում է աշակերտների նկատմամբ կարգապահական միջոցառումներ անցկացնելու համար, այնպես պետք է սահմանված լինեն, որ աշակերտների արժանապատվությունը չվիրավորվի:

2. Դյուրագգաց և վարքագծային խնդիրներ ունեցող աշակերտներին անհրաժեշտ են սոցիալական վարքի յուրահատուկ հրահանգներ: Այդ հրահանգները պետք է արտացոլվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններում:

Հոդված 36. Աշակերտների ընդգրկվածությունը

Ժամանակակից կրթական գործընթացը աշակերտներից առանձնահատուկ ակտիվություն է պահանջում: Այն ենթադրում է ոչ միայն աշակերտների գործուն մասնակցություն կրթություն ստանալու գործընթացին, այլ նաև մասնակցություն իր հասակակիցների ուսման գործընթացին: Դասի ժամանակ խմբային աշխատանք կատարելիս, նախագծերին մասնակցելիս, ներկայացումներ պլանավորելիս և բեմադրելիս՝ աշակերտներն օգնում են միմյանց տարբեր հայեցակարգերը ավելի լավ հասկանալու, կարողություններին ու հմտություններին տիրապետելու և զարգացնելու, վերաբերմունք ձևավորելու գործում: Հետևաբար, դասին աշակերտների հաճախումը ապահովելը դպրոցի կարևոր հոգսերից մեկն է:

Գլուխ VII. Պարտադիր և կամընտրական առարկաներ

Հոդված 37. Առարկաների խմբավորման գլխավոր սկզբունքները

1. Ազգային ուսումնական պլանով նախատեսված առարկաները միավորվում են ութ առարկայական խմբում.

- ա) Պետական լեզու,
- բ) Մաթեմատիկա,
- գ) Օտար լեզուներ,
- դ) Հասարակական գիտություններ,
- ե) Բնագիտական գիտություններ,
- զ) Տեխնոլոգիաներ,
- է) Գեղագիտական դաստիարակություն,

ը) Սպորտ:

2. Առարկայական խմբերը, առարկայական իրազեկությունների համաձայն, ընդգրկում են ինչպես պարտադիր, այնպես էլ կամընտրական առարկաներ:
3. Առարկայական խմբերը միավորում են հարակից առարկաները:
4. Առարկայական խմբերի մեջ մտնող առարկաները դասավանդվում են պարտադիր և/կամ կամընտրական առարկաների տեսքով ընդհանուր կրթության երեք աստիճաններում էլ:
5. Տարրական աստիճանում առարկաների միջև ինտեգրման աստիճանն անհամեմատ բարձր է, քան բազային ու միջնակարգ աստիճաններում, որտեղ առարկաները ավելի մասնագիտացված են դասավանդվում:

Հոդված 38. Պետական լեզու

1. Պետական լեզվի առարկայական խմբում միավորված են հետևյալ պարտադիր առարկաները.

ա) Վրաց լեզու և գրականություն (դասավանդվում է I-XII դասարաններում):

բ) Աբխազերեն լեզու ու գրականություն, Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում (դասավանդվում է I-XII դասարաններում):

գ) Վրաց լեզուն, որպես երկրորդ լեզու, ոչ վրացալեզու դպրոցների/բաժինների համար (դասավանդվում է I-XII դասարաններում):

2. Պետական լեզուն սովորելու արդյունքում երեխայի մոտ պետք է զարգանան հիմնական հաղորդակցական կարողությունները (գրել, կարդալ, լսել, խոսել) Վրաստանի պետական լեզվով (լեզուներով): Այս խմբի առարկայի/առարկաների ուսուցման նպատակն է աշակերտների մեջ զարգացնել գեղարվեստական երկերի գեղագիտական ընկալման ու գնահատման, սեփական կարծիքը տրամաբանական հետևողականությամբ արտահայտելու, կարդալու և տարբեր բովանդակության տեքստեր կազմելու կարողություններ ու հմտություններ, հարգանքի զգացում սերմանել գրական ժառանգության նկատմամբ, զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքի կուլտուրան:

3. Վրացերենը, որպես երկրորդ լեզու, սովորում են ոչ վրացալեզու աշակերտները:

Հոդված 39. Մաթեմատիկա

1. Մաթեմատիկայի առարկայական խմբին է պատկանում Մաթեմատիկա պարտադիր առարկան (դասավանդվում է I-XII դասարաններում):

2. Մաթեմատիկայի դասավանդման հիմնական նպատակն է աշակերտների մեջ մշակել վերլուծական, տրամաբանական, համակարգային ու խորհրդանշական մտածողություն հետազոտման կարողություններ ու հմտություններ: Մաթեմատիկայի դասավանդումը աշակերտին հնարավորություն է տալիս ձեռք բերել այն կարողություններն ու հմտությունները, որոնք հետագայում պետք է օգնեն նրան կենցաղային, գործնական հիմնախնդիրները լուծելու հարցում:

Հոդված 40. Օտար լեզուներ

1. Օտար լեզուների առարկայական խմբում միավորված են հետևյալ պարտադիր առարկաները.

ա) առաջին օտար լեզու (դասավանդվում է I-XII դասարաններում),

բ) երկրորդ օտար լեզու (դասավանդվում է VII- XII դասարաններում):

2. Օտար լեզուների ուսուցումը աշակերտի մոտ, պետական լեզվի հետ միասին, պետք է զարգացնի առնվազն երկու լեզվով հաղորդակցվելու կարողություն:

3. Թույլատրվում է, որ ոչ վրացալեզու դպրոցները/բաժանմունքները իրենց աշակերտներին, մայրենի և պետական լեզուներից բացի, ևս մեկ օտար լեզու ուսուցանեն:

4. Օտար լեզուների առարկայական խմբի գլխավոր նպատակներից մեկը այն է, որ աշակերտները կարողանան գրավոր կամ բանավոր հաղորդակցվել օտար լեզվով (լեզուներով): Բոլոր մյուս առարկայական խմբերի նման, հիմնական ուշադրությունը պետք է դարձվի ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու կարողության զարգացմանը:

5. Օտար լեզվի առարկայական չափորոշիչները կազմված են լեզվի տիրապետման մակարդակի համաձայն և ընդհանուր են ցանկացած օտար լեզվի համար: Առարկայական ծրագրերի բովանդակությունը նկատի է առնում միայն մի քանի օտար լեզու, թեև, դպրոցն իրավունք ունի, աշակերտներին այդ լեզուների փոխարեն այլ լեզու/լեզուներ առաջարկել, որը պետք է սահմանվի դպրոցական ուսումնական պլանով:

6. Առաջին օտար լեզվի ուսուցումն սկսվում է առաջին դասարանում, երկրորդինը՝ VII դասարանում (բացի ոչ վրացալեզու դպրոցների/բաժանմունքների համար սահմանված բացառության):

7. Առաջին դասարանից պարտադիր է Անգլերենի դասավանդումը: Բացառություններ կարելի է թույլ տալ Նախարարության հետ համաձայնության դեպքում: Բացառություն թույլ տալու դեպքում դպրոցն իրավունք ունի առաջին դասարանից ուսուցանել այլ օտար լեզու, թեև նման դեպքում դպրոցը պարտավոր է աշակերտին առաջարկել Անգլերենը, որպես երկրորդ օտար լեզու:

Հոդված 41. Հասարակական գիտություններ

1. Հասարակական գիտությունների առարկայական խմբում միավորված են հետևյալ պարտադիր առարկաները.

ա) Մեր Վրաստանը (դասավանդվում է V-VI դասարաններում),

բ) Վրաստանի ու աշխարհի պատմություն (դասավանդվում է VII- VIII, XI -XII դասարաններում),

գ) Վրաստանի պատմություն (դասավանդվում է IX դասարանում),

դ) Պատմության ներածություն (դասավանդվում է X դասարանում),

ե) Աշխարհագրություն (դասավանդվում է VII- VIII դասարաններում),

զ) Վրաստանի աշխարհագրություն (դասավանդվում է IX դասարանում),

է) Աշխարհի աշխարհագրություն (դասավանդվում է X դասարանում),

ը) Գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրություն (դասավանդվում է XI դասարանում),

թ) Քաղաքացիական կրթություն (դասավանդվում է IX-X դասարաններում),

ժ) Քաղաքացիական պաշտպանություն ու անվտանգություն (դասավանդվում է IV, VIII և XII դասարաններում):

2. Հասարակական գիտությունների առարկայական խմբի գլխավոր նպատակն է նպաստել տեղեկացված, գործուն ու պատասխանատվության զգացումով օժտված քաղաքացու դաստիարակմանը, տեղեկություններ հաղորդել հարազատ միջավայրի մասին, օգնել նրան սահմանել հայրենի երկրի տեղը համաշխարհային պատմական և աշխարհագրական գործընթացների մեջ, ձևավորել նրան որպես հայրենասեր ու մարդասեր անձ: Հասարակագիտական առարկայական խմբի առարկաների ուսուցումը վճռորոշ նշանակություն ունի աշակերտների մեջ քաղաքացիական արժեքներ մշակելու գործում:

Հոդված 42. Բնագիտական գիտություններ

1. Բնագիտական գիտությունների առարկայական խմբում միավորված են հետևյալ պարտադիր առարկաները.

ա) Բնագիտություն (դասավանդվում է I-VI դասարաններում),

բ) Բնագիտական գիտությունների հիմունքներ (դասավանդվում է VII դասարանում),

գ) Կենսաբանություն (դասավանդվում է VIII-XI դասարաններում),

դ) Ֆիզիկա (դասավանդվում է VIII-XI դասարաններում),

ե) Քիմիա (դասավանդվում է VIII-XI դասարաններում):

2. Բնագիտական առարկաների դասավանդման գլխավոր նպատակն է աշակերտին հաղորդակից դարձնել գիտությունների հիմունքներին և զարգացնել նրա մեջ հետազոտելու կարողություններ և հմտություններ, ինչը հնարավորություն կտա աշակերտին ճանաչել աշխարհը, ներգրավվել հասարակական աշխատանքի տարբեր ոլորտների մեջ, պատասխանատվություն զգալ սեփական անձի, հասարակության ու միջավայրի նկատմամբ:

Հոդված 43. Տեխնոլոգիաներ

1. Տեխնոլոգիաների առարկայական խմբին հատկացվում է Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ) պարտադիր առարկան (դասավանդվում է I, V-VI դասարաններում): Այն աշակերտները, ովքեր նոր Ազգային ուսումնական պլանի ներդրման պահի համար արդեն ավարտել են տարրական աստիճանը (սովորում են բազային կամ միջնակարգ աստիճանում), դպրոցն ավարտելիս պետք է հաղթահարած լինեն ՏՀՏ-ի գոնե առաջին մակարդակը: Նման դեպքում դպրոցը ՏՀՏ-ի դասավանդումը պետք է ապահովի ուսուցման բազային-միջնակարգ աստիճանի որևէ դասարանում:

2. Տեխնոլոգիաների առարկայական խմբի նպատակն է. նպաստել աշակերտների մեղիա և թվայնացված գրագիտության մակարդակի բարձրացմանը, օգնել նրանց տիրապետել տարբեր բնագավառներին յուրահատուկ տեխնոլոգիաներին և աջակցել այդ տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները զարգացնելու գործում ինչպես տարբեր առարկաների հետ ինտեգրված ուսուցման ժամանակ, այնպես էլ առանձին ուսուցման միջոցով:

Հոդված 44. Գեղագիտական դաստիարակություն

1. Գեղագիտական դաստիարակության առարկայական խմբում միավորված են հետևյալ պարտադիր առարկաները.

ա) Կերպարվեստ ու կիրառական արվեստ (դասավանդվում է I-IX դասարաններում),

բ) Երաժշտություն (դասավանդվում է I-IX դասարաններում),

գ) Վրացական պարեր (դասավանդվում է IV դասարանում),

2. Գեղագիտական դաստիարակության առարկայական խմբի նպատակն է երեխաների մեջ զարգացնել արվեստի նմուշներն ընկալելու, գնահատելու և ստեղծելու կարողություններ ու հմտություններ, օգնել նրանց սովորել արվեստի բազմակողմանի լեզուն և հաղորդակցվել աշխարհի մշակութային արժեքներին:

Հոդված 45. Սպորտ

1. Սպորտի առարկայական խմբին է պատկանում պարտադիր Սպորտ առարկան (դասավանդվում է I-XII դասարաններում):

2. Սպորտի դասավանդման նպատակն է ներգրավել աշակերտին ֆիզիկական ակտիվությունների մեջ և այդ ճանապարհով նպաստել նրա ֆիզիկական զարգացմանը, առարկայի դասավանդման նպատակներից մեկը նաև այն է, որ աշակերտը գիտակցի առողջ ապրելակերպի կարևորությունը մարդու կյանքում:

3. ՀԿԱ աշակերտները (հատկապես, ֆիզիկական հիմնախնդիրներ ունեցողները՝ հաշմանդամի սայլակից օգտվող, մտավոր խանգարում ունեցող, լսողության ու տեսողության խախտում ունեցող և այլն) սպորտի դասերին և մարզական մրցույթներին մասնակցում են նրանց համար մշակված անհատական ուսումնական պլանին համապատասխան:

Հոդված 46. Կամրնտրական առարկաներ

1. Միջնակարգ աստիճանում աշակերտներին հնարավորություն է տրվում ըստ իրենց հետաքրքրությունների ընտրել և սովորել տարբեր առարկաներ:

2. Կամրնտրական առարկայի դասավանդման գլխավոր նպատակը աշակերտների մտահորիզոնի ընլայնումն է ու նրանց փորձի հարստացումը: Սեփական ցանկությամբ ընտրված մի քանի առարկաների ուսուցումը հնարավորություն է տալիս փորձել սեփական ուժերը տարբեր կրթական բնագավառներում և ավելի ստույգ պատկերացում կազմել սեփական հակումների ու ապագայում ընտրելիք ուղիների մասին:

3. X-XII դասարաններում աշակերտը 5 կիսամյակի ընթացքում պետք է սովորի կամրնտրական առարկաները:

4. Կամրնտրական առարկան կարող է լինել մեկ մոդուլանոց կամ երկու մոդուլանոց: Աշակերտը կարող է սովորել երկու մոդուլանոց առարկայի միայն առաջին մոդուլը: Բացառություն է կազմում «Երրորդ օտար լեզուն» կամրնտրական առարկան, որը տրված է լեզվին տիրապետելու մակարդակին համապատասխան: Այս առարկայի համար կիրառվում է օտար լեզվի գոյություն ունեցող առարկայական ծրագիրը:

5. Կամրնտրական առարկայի յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին-առանձին:

6. Կամրնտրական առարկաներն ուսուցանվում են շաբաթական 2 ժամվա ծանրաբեռնավածությամբ:

7. XII դասարանի երկրորդ կիսամյակում կամընտրական առարկաները չեն դասավանդվում:

8. Կամընտրական առարկաների ուսուցման ժամանակ կարելի է դասարանը համալրել միջնակարգ աստիճանի տարբեր դասարանների աշակերտներով:

9. Հնարավորության դեպքում, ցանկալի է, որ դպրոցն աշակերտներին առավելագույնս լայն ընտրություն առաջարկի:

10. Կամընտրական առարկաների ցանկը

Առարկայի անվանումը	Կիսամյակների քանակը	Մոդուլների քանակը	Դասարանը
1. Ամերիկագիտություն	2	2	X/XI/XII
2. Աշխարհագրական հետազոտություն	2	1	X/XI/XII
3. Տնտեսություն ու պետություն	2	1	XI/XII
4. Թատերական արվեստ	2	1	X/XI/XII
5. Կինոարվեստ	2	2	X/XI/XII
6. Երրորդ օտար լեզու	2		X/XI/XII
7. Ձեռներեցության հիմունքներ	2	1	X/XI/XII
8. Քաղաքացիություն	2	1	X/XI/XII
9. Համաշխարհային մշակույթ	2	1	X/XI/XII
10. Երաժշտական և համակարգչային ծրագրերի գործնական դասընթաց	2	2	X/XI/XII
11. Միջազգային հումանիտար իրավունք	2	1	X/XI/XII
12. Բժշկական կենսաբանություն ու առողջություն	2	2	I մոդուլ - X/XI/XII II մոդուլ - XI/XII
13. Կերպարվեստ ու կիրառական արվեստ՝ տեսական-գործնական դասընթաց	2	1	X/XI/XII
14. Կերպարվեստ ու կիրառական արվեստ՝ գործնական դասընթաց	2	1	X/XI/XII
15. Բանահյուսություն և դիցաբանություն	2	1	X/XI/XII

16. Քիմիական տեխնոլոգիաներ	2	2	XI/XII
17. Ժամանակակից ֆիզիկայի ներածություն	2	2	I մոդուլ - XI/XII II մոդուլ - XII
18. XIX -XX դարերի արևմտյան գրականություն	2	1	X/XI/XII
19. Արվեստի պատմություն	2	1	X/XI/XII

Հոդված 47. «Աբիտուրի ժամը»

Բացի պարտադիր ու կամընտրական առարկաներից, XII դասարանի ժամային ցանցում նախատեսված են, այսպես կոչված, «Աբիտուրի ժամեր» այն առարկաների համար, որոնցից անցկացվում են դպրոցի ավարտական քննությունները: Նշված «Ժամի» նպատակն է աջակցել աշակերտին յուրաքանչյուր կոնկրետ առարկայից սովորած նյութը կրկնել դպրոցի ավարտական քննության համար սահմանված ծրագրի համաձայն:

Գլուխ VIII. Գերակա համապիտանի իրազեկություններ

Հոդված 48. Ազգային ուսումնական պլանի գերակա համապիտանի իրազեկությունները

1. Հաշվի առնելով հանրակրթական ազգային նպատակներն ու հասարակական պահանջները, Ազգային ուսումնական պլանը առանձնացում է ինը գերակա իրազեկություն, որոնց տիրապետելը պարտադիր է ժամանակակից աշխարհում ինքնաիրացման ու պատշաճ տեղ հաստատելու համար: Առարկաների դասավանդումը հատուկ իրազեկությունների զարգացման հետ մեկտեղ նպաստում է աշակերտների մեջ այդ համապիտանի գերակա իրազեկությունների զարգացմանը:

2. Համապիտանի իրազեկություններին տիրապետելու համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում առարկաների միջև կապեր հաստատել: Ուսուցիչը պետք է աջակցի աշակերտին, որ նա որևէ առարկայից ձեռքբերած գիտելիքն ու փորձը օգտագործի տարբեր բովանդակություն ունեցող համատեքստերում:

3. Համապիտանի գերակա իրազեկություններն են.

ա) Գրագիտություն: Ավանդական հասկացությամբ «գրագիտություն» բառը ենթադրում է կարդալու, գրելու, լսելու ու խոսելու նպատակով լեզվի կիրառման կարողություն: Այսօր այդ հասկացության բովանդակությունը չափազանց ընդգրկուն է: Ժամանակակից հասկացությամբ, գրագիտությունը փոփոխուն համատեքստերում կարդալու, գրելու, տեղեկատվությունը մշակելու ու հիմնախնդիրները կարգավորելու կարողությունն է այն գիտելիքների հիման վրա, որոնք մարդը ձեռք է բերում ամբողջ կյանքի ընթացքում:

բ) Մեդիագրագիտություն: Հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում, ժամանակակից աշխարհում, ավանդական տեքստերի հետ մեկտեղ, կարևոր տեղ են զբաղեցնում մուլտիմեդիական տեքստերը՝ այն տեքստերը, որոնք միաժամանակ կիրառում են լեզվական, ձայնային ու դիտողական եղանակները: Բացի դրանից, ժամանակակից աշխարհում մեդիան՝ լրատվամիջոցը, ամենից ուժեղ մշակութային գործիքն է, որն ընդգրկում է մարդու կյանքի բոլոր ոլորտները: Այդ

պատճառով էլ անհրաժեշտ է, որ աշակերտը, մի կողմից՝ կարողանա ընկալել իմաստավորել, մեկնաբանել, կիրառել և ստեղծել այս նոր ոճի, բազմաձև մուլտիմեդիական տեքստերը, իսկ մյուս կողմից՝ կողմնորոշվել մեդիա-աշխարհում, ճիշտ ընտրություն անել («Ֆիլտրել», «գտել») և քննադատաբար գնահատել ստացած տեղեկատվությունը: Այդ տեսակետից, մեդիագրագիտությունը նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը:

գ) Թվայնացված գրագիտություն (նույնն է, ինչ որ համակարգչային գրագիտությունը): Ժամանակակից աշխարհում հաղորդակցական ու թվայնացված տեխնոլոգիաների զարգացումը ավելի ընդարձակեց «գրագիտություն» հասկացությունը: Այն այժմ ընդգրկում է նաև ցանցային որոնման, տեքստերի էլեկտրոնային մշակման ու տեքստային հաղորդագրության ծրագրերի կիրառման կարողությունը, որն ամբողջովին կոչվում է թվայնացված գրագիտություն: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է աշակերտների մեջ ստեղծագործական ու նորարարական մոտեցումների մշակմանը:

դ) Քանակական գրագիտություն: Քանակական գրագիտությունն այն կարողությունների և հմտությունների միասնականությունն է, որոնց տիրապետումը աշակերտին օգնում է գիտակցել թվերի էությունը, տարբեր ձևով արտահայտել քանակը, հասկանալ թվերի միջև կապը և համեմատել քանակները: Այս կարողություններն ու հմտություններն աշակերտին հարկավոր են ոչ միայն մաթեմատիկան, այլ նաև մյուս առարկաներն ուսումնասիրելու համար:

ե) Բնապահպանական գրագիտություն: Բնապահպանական գրագիտությունը ենթադրում է միջավայրի նկատմամբ մարդու առողջ վերաբերմունքի ձևավորում, ինչը նշանակում է, որ աշակերտը պետք է գիտակցի անձնական պատասխանատվությունը շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ, կարողանա մասնակցել միջավայրի պահպանմանն ու վերականգնմանը:

զ) Բազմալեզու իրազեկություն: Բազմալեզու իրազեկությունը մարդու՝ լեզվին/լեզուներին տիրապետելու և կիրառելու, ներքին կարողությունն է: Ցանկացած առարկայից աշակերտը գիտելիք և կարողություններ ձեռք է բերում լեզվական ակտիվությունների միջոցով: Հետևաբար, յուրաքանչյուր առարկա իր ներդրումն ունի աշակերտի լեզվական իրազեկության զարգացման գործում:

է) Մեմիոտիկ իրազեկություն: Մեմիոտիկ իրազեկությունը բառային և ոչ բառային (քարտեզի, դիագրամի, սխեմայի, նկարի, մեղեդու և այլնի) եղանակներով հաղորդված տեղեկությունը իմաստավորելու և մեկնաբանելու, սեփական միտքն ու զգացածը տարբեր ձևով հաղորդելու, տեղեկատվությունը նշանների մի համակարգից մյուսը տեղափոխելու (օրինակ՝ բառային տեքստում կամ երաժշտական գործում հաղորդված միտքը պատկերազարդ արտահայտելու, բառային տեքստն ու նկարը միմյանց հետ կապելու, բառերով հաղորդված տեղեկատվությունը (դիագրամի) տեսքով ներկայացնելու և այլն) կարողությունն է:

ը) Ուսանման ուսանումը: Ուսանման ուսանումը ուսման գործընթացն ինքնուրույն կառավարելու կարողությունն է: Ուսուցիչն աշակերտի ուշադրությունը պետք է կենտրոնացնի ուսման գործընթացի, դրա ընթացքի վրա: Պետք է օգնի աշակերտին հասկանալ այն գործոններն ու պայմանները, որոնք խոչընդոտում կամ նպաստում են

ուսումնական գործընթացին, աշակերտին հայտնաբերել տա այն եղանակներն ու մոտեցումները, որոնք բարելավում են ուսման արդյունքները, և մշակում նրա՝ սովորելու ռազմավարություններն ինքնուրույն կիրառելու կարողությունը:

թ) Մոցիալական ու քաղաքացիական իրազեկություն: Մոցիալական ու քաղաքացիական իրազեկությունը ենթադրում է քաղաքացիական կյանքին ինտեգրվելու համար անհրաժեշտ այնպիսի կարողությունների և արժեքների ձևավորում, ինչպիսիք են. գործնական համագործակցությունը, հիմնախնդիրների կարգավորումը, քննադատական ու ստեղծագործական մտածողությունը, որոշումների կայացումը, ներողամտությունը, ուրիշի իրավունքների նկատմամբ հարգանքը, ժողովրդավարական սկզբունքների ճանաչումը և այլն: